Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2019 թվականի ապրիլի 30-ի նիստում,
արձանագրություն N 11,
գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի պաշտոնակատար
_____ Ռ. Ա. Հայրապետյան
30 ապրիլ 2019 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) գիտամանկավարժական կազմի ընտրության և պաշտոն-ների տեղակալման չափանիշները, պայմաններն ու կարգը:

2. Համալսարանում սահմանվում են գիտամանկավարժական կազմի հետևյալ պաշտոնները՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս:

3. Համալսարանում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի բաց մրցութային կարգով ընտրությունը:

II. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄ

4. Պրոֆեսորի պաշտոն կարող են զբաղեցնել համապատասխան բնագավառում պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք:

5. Դոցենտի պաշտոն կարող են զբաղեցնել համապատասխան բնագավառում պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք:

6. Ասիստենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր համապատասխան բնագավառում ունեն գիտական աստիճան կամ դասավանդվող դասընթացների ոլորտում՝ մասնագիտական աշխատանքի փորձ:

7. Դասախոսի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր տվյալ կամ հարակից մասնագիտության գծով ունեն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

8. Ըստ պաշտոնների՝ սահմանվում են գիտամանկավարժական կազմի գործունեության հետևյալ տեսակները.

1) Պրոֆեսորի և դոցենտի համար՝ դասախոսությունների վարում, սեմինարների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացում, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում:

2) Ասիստենտի համար՝ դասախոսությունների, սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացում, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարում:

3) Դասախոսի համար՝ բակալավրիատում գործնական, լաբորատոր պարապմունքների և սեմինարների անցկացում:

III. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Գիտամանկավարժական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար տարեկան առնվազն մեկ անգամ մամուլում և համալսարանի կայքում տրվում է մրցույթի հայտարարություն՝ ըստ դասընթացների: Հայտարարության մեջ նշվում են

մրցույթի պայմանները, հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման վայրն ու ժամկետները:

10. Յուրաքանչյուր հավակնորդ կարող է դիմել մինչև երկու ամբիոնի՝ առավելագույնը յոթ դասընթացի մրցույթի մասնակցելու համար:

11. 70 տարին լրացած անձինք գիտամանկավարժական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցույթին չեն կարող մասնակցել:

12. Մրցույթին մասնակցության համար սույն կանոնակարգի N 1 և N 2 հավելվածներում նշված չափանիշներին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են մարդկային ռեսուրսների կառավարման բաժին հայտարարությունը տալուց հետո 30 օրվա ընթացքում: Հավակնորդի գործը չի ընդունվում, եթե պահանջվող փաստաթղթերն ամբողջական չեն կամ պահպանված չէ դրանց ներկայացման ժամկետը:

13. Հավակնորդի կողմից ներկայացված փաստաթղթերում կեղծիքի՝ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո հայտնաբերման պարագայում կնքված պայմանագիրը ենթակա է լուծման:

14. Գիտամանկավարժական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմած հավակնորդների ներկայացրած բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը քննարկվում են ռեկտորի հրամանով ձևավորված մրցութային հատուկ հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

15. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ համապատասխան ամբիոնի վարիչ և ֆակուլտետի դեկան, մարդկային ռեսուրսների կառավարման, որակի ապահովման բաժինների և ռեկտորատի մեկական ներկայացուցիչ: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

16. Հանձնաժողովի գործառույթներն են՝ դոցենտի, ասիստենտի և դասախոսի պաշտոնների տեղակալման մրցույթների անցկացումը, որոշումների կայացումն ու ռեկտորի հրամանագրմանը հավակնորդների ներկայացումը, ինչպես նաև հավակնորդ պրոֆեսորի վերաբերյալ բոլոր նյութերի քննարկումը, որոշման կայացումը և գիտական խորհրդին ներկայացումը:

17. Հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը: Դասընթացի համառոտ նկարագրի մասին բացասական եզրակացության դեպքում հավակնորդը զրկվում է մրցույթին մասնակցելու հնարավորությունից, ինչի մասին տեղեկացվելուց հետո 2 օրվա ընթացքում կարող է բողոքարկել եզրակացությունը ռեկտորին:

18. Հանձնաժողովը կատարում է սահմանված չափանիշների ստուգում՝ հաշվարկելով հավակնորդի վաստակած վերջնական գումարային միավորը: Յուրաքանչյուր չափանիշի գծով հավակնորդը կարող է վաստակել 1 կամ 0 միավոր: Անհրաժեշտության դեպքում համակարգչային, մաթեմատիկական կամ լեզվական հմտություններն առավել ճշգրիտ ստուգելու նպատակով հանձնաժողովը կարող է ներգրավել համապատասխան մասնագետների՝ առանց քվեարկության ձայնի իրավունքի: Եթե հանձնաժողովի բոլոր անդամներն ունեն համաձայնություն չափանիշին հավակնորդի համապատասխանության վերաբերյալ, ապա հանձնաժողովը կարող է հավակնորդին տվյալ չափանիշի վերաբերյալ ստուգիչ հարցեր չտալ:

19. Վերջնական գումարային միավորի հավասարության կամ 1 միավորի տարբերության պարագայում հավակնորդի ընտրության հարցը որոշվում է հանձնաժողովի քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

20. Անկախ հավակնորդների միավորներից՝ հանձնաժողովի նախագահը կարող է մեկ աշխատանքային օրվա ընթացքում դիմել ռեկտորին հավակնորդների փորձնական դաս կազմակերպելու համար: Բավարար հիմքերի առկայության և ռեկտորի կողմից դրական որոշում կայացնելու պարագայում փորձնական դասը կազմակերպվում է հանձնաժողովի անդամների համար, տեսաձայնագրվում է և կարող է հրապարակվել: Փորձնական դասի թեման դրա մեկնարկից մեկ ժամ առաջ որոշում է ռեկտորը (կամ ռեկտորի հանձնարարությամբ՝ պրոռեկտորներից մեկը)՝ ըստ դասընթացի ծրագրի: Փորձնական դասի արդյունքում, հավակնորդների դրսևորած որակական հատկանիշները հաշվի առնելով, ռեկտորը հանձնաժողովի հետ քննարկում է բոլոր չափանիշները և կայացնում որոշում:

21. Դոցենտների, ասիստենտների և դասախոսների ընտրությունն իրականացնում է հանձնաժողովը հետևյալ կարգով:

1) Հավակնորդների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը քննարկվում են հանձնաժողովում: Հանձնաժողովը հավակնորդի մասնակցությամբ ուսումնասիրում է առկա փաստաթղթերը՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի պահանջները և N 3 հավելվածում նշված չափանիշները:

2) Անկախ մասնակիցների քանակից՝ տվյալ դասընթացի գծով մրցույթի հաղթող կարող է ճանաչվել սույն կանոնակարգի N 3 հավելվածում ներկայացված չափանիշների հաշվարկով առնվազն 5 միավոր վաստակած մասնակիցը:

3) Մեկ հավակնորդի դեպքում նվազագույն՝ 5 միավորով մրցույթում հաղթող ճանաչվելու համար անհրաժեշտ է ստանալ հանձնաժողովի ձայների պարզ մեծամասնությունը:

4) Հանձնաժողովի որոշման հիման վրա մրցույթով ընտրված հավակնորդի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր՝ սույն կանոնակարգով տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով:

22. Պրոֆեսորների ընտրությունն իրականացնում է գիտական խորհուրդը հետևյալ կարգով:

1) Նախքան գիտական խորհրդում փակ գաղտնի քվեարկությունը հավակնորդի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը քննարկվում են հանձնաժողովում: Հանձնաժողովը հավակնորդի մասնակցությամբ ուսումնասիրում է առկա փաստաթղթերը՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի պահանջները և N 3 հավելվածում նշված չափանիշները:

2) Անկախ մասնակիցների քանակից՝ տվյալ դասընթացի գծով մրցույթի հաղթող կարող է ճանաչվել սույն կանոնակարգի N 3 հավելվածում ներկայացված չափանիշների հաշվարկով առնվազն 5 միավոր վաստակած մասնակիցը:

3) Մեկ հավակնորդի դեպքում նվազագույն՝ 5 միավորով մրցույթում հաղթող ճանաչվելու համար անհրաժեշտ է ստանալ հանձնաժողովի ձայների պարզ մեծամասնությունը:

4) Գիտական խորհրդին ներկայացվում են միայն այն հավակնորդների թեկնածությունները, որոնք սույն կանոնակարգի պահանջների և N 3 հավելվածի չափանիշների համաձայն հանձնաժողովի կողմից ընտրվել են առնվազն մեկ դասընթացի համար:

5) Հանձնաժողովի որոշումը հանձնվում է համալսարանի գիտական քարտուղարին, որը փաստաթղթերը ներկայացնում է գիտական խորհրդին:

6) Գիտական խորհրդի նախագահը կամ նիստը վարողը ընտրված հավակնորդների վերաբերյալ տվյալները և հանձնաժողովի որոշումները ներկայացնում է գիտական խորհրդին՝ փակ գաղտնի քվեարկության դնելու համար:

7) Գիտական խորհրդի նիստին պրոֆեսորի պաշտոնի հավակնորդների ներկայությունը պարտադիր է: Քննարկումներից և ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտարարած հավակնորդների ազգանունները, գիտական խորհրդի որոշմամբ, գրվում են քվեաթերթիկներում (N 1 ձևը կցվում է):

8) Նախագահը գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ գաղտնի քվեարկության կարգը: Խորհրդի անդամների առաջարկով, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, գիտական խորհրդի որոշմամբ խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով: Հավակնորդները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

9) Գիտական խորհրդի կազմի յուրաքանչյուր անդամի տրվում է մեկական քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողն ստորագրում է քվեարկության ցուցակում: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (N 2 ձևը կցվում է):

10) Ընտրված է համարվում գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին ստացած հավակնորդը: Ընտրված հավակնորդի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր սույն կանոնակարգով տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով:

23. Պետական հաստատությունների և խոշոր կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաների դիմելու պարագայում հանձնաժողովի ներկայացմամբ ռեկտորը կարող է հրամանագրել հավակնորդին:

24. Դասընթացի գծով հաղթող ճանաչված հավակնորդն իր ցանկությամբ կարող է ստանալ ոչ ավելի, քան 1.0 դրույքին համապատասխան լսարանային բեռնվածություն տվյալ դասընթացի համար: Այդ դասընթացի գծով մնացած դասաժամերը բաշխվում են ըստ հերթականության հաջորդ տեղերն զբաղեցրած հավակնորդների միջև, որի դեպքում առավելություն ստացած հավակնորդն ստանում է առաջնահերթության իրավունք ստանալու առավելագույնը 1.0 դրույքին համապատասխան լսարանային բեռնվածություն: Այս գործընթացը շարունակվում է մինչև տվյալ դասընթացի գծով լսարանային դասաժամերի սպառումը:

25. Մեկ ուսումնական տարվա ընթացքում անհատական բեռնվածությունը չի կարող գերազանցել 1.25 դրույքը:

26. Համալսարանում սահմանվում են մրցույթի արդյունքում գիտամանկավարժական կազմի պաշտոններում ընտրված անձանց աշխատանքային պայմանագրերի հետևյալ գործողության ժամկետները.

1) պրոֆեսոր, դոցենտ և ասիստենտ՝ մինչև 3 տարի,

2) դասախոս՝ մինչև 2 տարի:

27. Մրցույթի արդյունքները կարող են չեղյալ հայտարարվել սույն կանոնակարգի պահանջները խախտելու դեպքում:

IV. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

28. Թափուր տեղն զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

1) տեղը թափուր է ժամանակավորապես (ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, գործուղման, ժամանակավոր անաշխատունակության դեպքերում),

2) առկա է պետական պատվերի շրջանակներում ասպիրանտուրան ավարտածներին համալսարանում աշխատանքի տեղավորելու (ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի N 581-Ն որոշում), ինչպես նաև ասպիրանտներին ուսումնառության ընթացքում ուսումնական բեռնվածությամբ ապահովելու (ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշում) պարտավորություն:

29. Մրցույթի արդյունքում թափուր մնացած դասաժամերի առկայության պարագայում համապատասխան ամբիոնի վարիչը կարող է առաջադրել սույն կանոնակարգով սահմանված թափուր պաշտոնների տեղակալման չափանիշներին համապատասխանող հավակնորդի, այդ թվում՝ 70 տարին լրացած անձի թեկնածություն, որը հաստատում է ռեկտորը: Հավակնորդի հետ կարող է կնքվել աշխատանքային պայմանագիր մինչև մեկ ուսումնական տարի ժամկետով: 70 տարին լրացած անձանց հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է ոչ լրիվ բեռնվածությամբ:

30. Ամբիոնի բաժանման և ամբիոնների միավորման ժամանակ արգելվում է գիտամանկավարժական կազմի վաղաժամկետ մրցույթի անցկացումը:

V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

31. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

32. Մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելը գիտամանկավարժական կազմի աշխատողները շարունակում են պաշտոնավարել մինչև սահմանված ժամկետի ավարտը:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 4) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը»:

ՑԱՆԿ

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Դիմում ռեկտորին
2. Անձնագրի պատճեն
3. Ինքնակենսագրություն (հավելված N 2)
4. Ինքնակենսագրության տեղեկատվությունը հավաստող բոլոր փաստաթղթերի պատճեններ
5. Դասընթացի համառոտ նկարագիր՝ 2-3 էջի սահմաններում, որում պետք է նշված լինի՝
   1) դասընթացի նպատակը (1-2 պարբերություն)
   2) թեմաները և յուրաքանչյուր թեմայի համառոտ բնութագիրը՝ գիտելիք-հմտություն-կարողունակություն տրամաբանությամբ (1-2 նախադասություն)

Հավելված N 2

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

1.	Անուն, հայրանուն, ազգանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հասցե	
4.	Հեռախոսահամար	
5.	Էլ. փոստի հասցե	
6.	Կրթություն	
7	Գիտական աստիճան	
8.	Գիտական կոչում	
9.	Աշխատանքային փորձ	
10.	Դասընթացին առնչվող մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն վերջին 5 տարվա ընթացքում	
11.	Դասախոսական աշխատանքի փորձ	
12.	Վերջին 5 տարվա ընթացքում տվյալ դասընթացին առնչվող կառավարչական (ղեկավար պաշտոն) աշխատանքի փորձ	
13.	Մասնագիտական վերապատրաստումներ	
14.	Վերջին 10 տարիների գիտական հրապարակումներ	
15.	Վերջին 10 տարվա ընթացքում միջազգային գիտաժողովների, սեմինարների, համաժողովների և միջազգային դրամաշնորհային կրթական ծրագրերի մասնակցություն	
16.	Մասնագիտական որակավորումը հավաստող միջազգայնորեն ճանաչված աստիճանի առկայություն (օրինակ՝ CFA, PMP և այլն)	
17.	Անգլերենի ազատ տիրապետում	
18.	Անգլերենով դասավանդման փորձ	
19.	Ռուսերենի ազատ տիրապետում	
20.	Մաթեմատիկական բազային հմտություններ	
21.	Համակարգչային հմտություններ (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point)	
22.	Վիճակագրական որևէ փաթեթի տիրապետում (SPSS, STATA, EViews և այլն)	
23.	Դասընթացի վերաբերյալ նյութերի առկայություն	

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ[1]

N	Չափանիշ	Ստուգման ձևը	Ստուգման արդյունքը
1.	Գիտական աստիճանի առկայություն	Փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ առկայության պարագայում
2.	Վերջին 5 տարվա ընթացքում դասընթացին առնչվող առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն	Փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ առկայության պարագայում
3.	Առնվազն 2 կիսամյակի դասախոսական աշխատանքի փորձի առկայություն ՀՀ պետական, միջպետական կամ օտարերկրյա հեղինակավոր համալսարաններում	Փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ առկայության պարագայում
4.	Անգլերենի ազատ տիրապետում	Անգլերենով զրույց, մասնագիտական հարց ու պատասխան, անհրաժեշտության դեպքում՝ կարճ տեքստի թարգմանություն հայերենից անգլերեն	1 միավոր՝ ազատ տիրապետման պարագայում
5.	Ռուսերենի ազատ տիրապետում	Ռուսերենով զրույց, մասնագիտական հարց ու պատասխան, անհրաժեշտության դեպքում՝ կարճ տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն	1 միավոր՝ ազատ տիրապետման պարագայում

[1] Եթե հանձնաժողովի բոլոր անդամներն ունեն համաձայնություն չափանիշին հավակնորդի համապատասխանության վերաբերյալ, ապա հանձնաժողովը կարող է հավակնորդին տվյալ չափանիշի վերաբերյալ ստուգիչ հարցեր չտալ:

6*.	Մաթեմատիկական բազային հմտություններ	Հարցազրույց, պարզ առաջադրանքներ	1 միավոր՝ առկայության պարագայում
7.	MS Office փաթեթի ազատ տիրապետում (Word, Excel, PowerPoint)	Հարցազրույց, պարզ առաջադրանքներ	1 միավոր՝ առկայության պարագայում
8*.	Վիճակագրական որևէ փաթեթի տիրապետում (SPSS, STATA, EViews, R և այլն)	Դասընթացն ավարտած լինելու վստահելի փաստաթղթի առկայություն, նախկինում կատարած աշխատանքի կամ ունակությունների առերևույթ ներկայացում	1 միավոր՝ առկայության կամ ներկայացման պարագայում
9.	Մասնագիտական վերապատրաստումների առկայություն	Փաստաթղթերի ստուգում, վստահելի վկայագրերի առանձնացում	1 միավոր՝ միայն առավելություն ունեցող թեկնածուին
10.	Վերջին 10 տարվա ընթացքում միջազգային գիտաժողովների, սեմինարների, համաժողովների և միջազգային դրամաշնորհային կրթական ծրագրերի մասնակցություն	Մասնակցության վկայագրերի կամ մասնակցությունը հավաստող այլ փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ միայն առավելություն ունեցող թեկնածուին
11.	Մասնագիտական որակավորումը հավաստող միջազգայնորեն ճանաչված աստիճանի առկայություն (օրինակ՝ CFA, PMP և այլն)	Փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ առկայության պարագայում
12.	Վերջին 5 տարվա ընթացքում տվյալ դասընթացին առնչվող կառավարչական (ղեկավար պաշտոն) աշխատանքի փորձ	Փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ առկայության պարագայում
13.	Անգլերենով դասավանդման փորձի առկայություն	Փաստաթղթերի ստուգում	1 միավոր՝ առկայության պարագայում

** 6-րդ և 8-րդ կետերում ներկայացված չափանիշները չեն վերաբերում լեզուների, փիլիսոփայության և հայոց պատմության, իրավագիտության և քաղաքագիտության, ֆիզիկական դաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ամբիոններին:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի _____ նիստում
տարեթիվը, ամսաթիվը

(արձանագրություն N ____) _____
ամբիոնի անվանումը

ամբիոնի _____ պաշտոնի փակ գաղտնի քվեարկության

_____
թեկնածուի ազգանունը, անունը

Կողմ
Դեմ

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում թողնվում է «Կողմ» բառը, ջնջվում՝ «Դեմ» բառը,
իսկ դեմ լինելու դեպքում թողնվում է «Դեմ» բառը, ջնջվում՝ «Կողմ» բառը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է _____
գիտական խորհրդի _____ նիստում (արձանագրություն N ____)
տարեթիվը, ամսաթիվը

հետևյալ կազմով՝

1. _____
ազգանուն, անուն
2. _____
ազգանուն, անուն
3. _____
ազգանուն, անուն
4. _____
ազգանուն, անուն
5. _____
ազգանուն, անուն

Գիտական խորհրդի _____ անդամից նիստին ներկա էր _____ անդամ:
Քվեարկվել է _____
ամբիոնի անվանումը

ամբիոնի _____ պաշտոնի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել է գիտական խորհրդի _____ անդամ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Թեկնածուի ազգանունը, անունը	Կողմ	Դեմ	Անվավեր

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ _____ -ը
ազգանուն, անուն

ընտրված է / չի ընտրված _____
ամբիոնի անվանումը

ամբիոնի _____ պաշտոնում:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն
2. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն
3. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն
4. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն